№ 136 ՕԳՈՍՏՈՍԻ 10 (22) 1878 ՕԳՈՍՏՈՍԻ 10 (22) № 136

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1878 թվից

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցեով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի թղթակցութիւնները միակողմանի են։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ալէքսանդրօպոլից։ Նամակ Զալալ-Օղլուց։ Նամակ Վերին-Ագուլիսից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Բաթում, Լազեր և Հայոց հարց։ Ֆրանսիա։ Յունաստան։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԻՆՉԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԵՆ

Երեք տարի «Մշակ» հրատարակելով, մենք ամեն տարի աշխատեցինք բազմակողմանի պրոգրամներ տալ մեր թղթակիցներին, բայց այնու ամենայնիւ թղթակցութիւնների մեծ մասը մնում են միակողմանի։

Ի՞նչ է սորա պատճառը։

Պատճառը այն է որ հայոց լրագրին թղթակցող անձինք պատկանում են գլխաւորապէս հայոց հասարակութեան մի յայտնի դասին՝ քահանաներին և ժողովրդական դպրոցների ուսուցիչներին, մի խօսքով հասարակութեան միջին դասի հայ գրագէտներին....

Պարզ է, որ այս անձինքների գործունէութեան շրջանը լինելով միմիայն եկեղեցի և դպրոց, թղթակցութիւնների նիւթի մեծ մեծ մասն էլ լինում է՝ եկեղեցի և դպրոց։ Ուրիշ ի՞նչ բաների, ի՞նչ երևոյթների վրա կարող են գրել նրանք, երբ որ միայն այդ երկու գործիքներն են կազմում նրանց շրջանը, նրանց կեանքը....

Հայոց կեանքը չէ սահմանափակվում միայն այդ երկու գործիքների՝ եկեղեցու և ուսումնարանի մէջ, ոչ հայոց կեանքի մէջ կան և ուրիշ շատ խնդիրներ՝ հասարակական, երկրագործական, առևտրական, ընտանեկան, ֆինանսական, առողջապահական և այլն.... Բայց նրանք, որոնք քահանայից և ուսուցչից աւելի մօտ են այդ բոլոր թէ հասարակական և թէ տնտեսական հարցերին, մեծ մասամբ կամ անգրագէտ են, ինչպէս ստորին դասի ժողովուրդը, կամ իրանց գործունէութեան շրջանի, շահերի, և վերջապէս իրանց շրջանում գործածական լեզուի կողմից օտարացած են հայութենից։ Նրանք պահանջ չեն զգում յայտնել իրանց ցաւերը, իրանց ձգտումներն ու ցանկութիւնները հայոց լրագրութեանը իրանց մայրենի լեզուի միջոցով, որին նրանք մեծ մասամբ այնչափ չեն տիրապետում, որ նրանով կարողանան յայտնել իրանց մտքերը։

Լուսաւորված ազգերի մէջ լրագրի աշխատակից կամ թղթակից լինելը նոյնպիսի մի արուեստ կամ պարապմունք է, ինչպէս բժիշկ, ինժինէր, կամ ադվոկատ լինելը։ Այդ պարապմունքը նոյնքան լաւ վարձատրվում է որքան մի որ և է այլ ուսումնական պարապմունք, բարձր արվեստ, կամ արհեստ։

Իսկ դորա համար հարկաւոր է որ և մեր լրագրութիւնը այնքան միջոցներ ունենար, որ կարողանար ոչ թէ միայն վարձատրել, բայց ապահովել իր աշխատակիցներին և թղթակիցներին։

Բայց այդ դրութեանը կարող է հասնել մեր լրագրութիւնը միայն այն ժամանակ, երբ բաւական բաժանորդներ կունենայ։

Որովհետև մեզանում թղթակցութիւնները դեռ ևս չեն վարձատրվում, այդ պատճառով գրում են մեծ մասամբ միայն նրանք, որոնք մի կողմից գրագէտ են, իսկ միւս կողմից նրանք, որոնք իրանք պահանջ են զգում գրելու և իրանց հետաքրքրող նեղ շրջանի՝ եկեղեցու և դպրոցի երևոյթների վրա մտքեր յայտնելու, իսկ ուրիշ հարցերի, տնտեսական և հասարակական հարցերի վրա գրել ընդունակները, կամ անգրագացած ուրեմն անգրագէտ մարդիկ են, կամ եթէ զարգացած, լուսաւորված մարդիկ են,—հայութենից օտարացած լինելով, տեղեակ չեն հայոց լեզուին, և բացի սորանից առանց վարձատրութեան ոչինչ չեն անի....

Կայ և մի ուրիշ շրջան՝ դրանք մեր ամեն տեսակ թէ միջնակարգ և թէ բարձրագոյն դպրոցների ուսանողներ են։ Սրանք ժամանակով, երբ ուսումը կաւարտեն, եթէ այն ժամանակ լրագրին թղթակից և աշխատակից լինելը կը վարձատրվի, կը ներկայացնեն մամուլի աշխատակիցների հարուստ կոնտինգէնտ։

Բայց առժամանակ նրանց գրվածները աւելի տեսական, քան թէ գործնական բնաւորութիւն ունեն։

Եւ սրանց մեծ մասն էլ ապասում են որ լրագիրը նրանց վարձատրէ, որպէս զի արժանացնեն նորա էջերը հարատացնել իրանց շնորհալի գրվածներով։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

2 օգոստոսի

Ներքին Ղանլիճա գիւղը, որ Շիրակ գաւառի մէջ Ալէքսանդրօպոլից հաւիւ թէ 10 վերստ հեռաւորութիւն ունի, գեղեցիկ դաշտավայրի վրա է և գրեթէ 60 տուն հայ բնակիչներից բաղկացած, գտնվում է Գարեգեոի ձախ ափում։

Խոտաւէտ և ժայռոտ ձորակը, որի միջով լսելի է Գարեգեոի խոխոջալից գնացքը, Անիի ծաղկոցաձորն է պատկերացնում. ընութեան ձեռքերով շինված, կարծես բարձր որմերի և հսկայակերպ կանգուն բուրգերի նմանութիւն ունի, ուր նեղ ճանապարհներով խոնաւ այրեր են գտնվում։

Ներքին և վերին Ղանլիճան, երկու միմեանցից մի քանի սաժէն հեռաւորութեամբ գտնվող գիւղեր են. ունեն քաղաքից (Ալէքսանդրօպոլից) երկու ճանապարհ, որոնցից բարձրով գնացողը հարկադրված է լինում Վերին-Ղանլիճա մտնել։

Այստեղ հանդիպող հետաքրքիր ճանապարհորդին «Վահրամաչէն» անունով ամրոց գնալը անհրաժեշտ է, որը գիւղից քարախիտ լեռաը բարձրանալով փոքրիկ հովտի վրա է։ Բացի քարի կոյտերի, երկրի հետ հաւասարված փլատակների և բնական խիտ—մեծամեծ քարերով շրջապատող պարսպից ուրիշ ոչինչ չէք գտնելու, միայն հարաւ-արևմտեան կողմը, գրեթէ 1½ սաժէն բարձրութեամբ քարի վրա դրոշմված բեռաձև գրերի 5 շարք արձանագրեր կան, որ տակաւին անջինջ և պարզ կերպով մնացած են։

Կլիման բաւական տաք է։ Գիւղի մէջ բղխում է մի աղբիւր, որ ձմեռը տաք և գարնան շատ սառն է լինում։

Երկրորդ ճանապարհը որ գետեզրովն է, դեռ գիւղ չը մտած ձեղ ցոյց կը տայ իր հանդէպ գետի վրա գտնվող մի հնադարեան, խպառ աւերված շինութիւն, որի մէջ նշմարելի կերպով կանգնած է, քառանկիւնի փոքրիկ սենեակի մեծութեամբ, կամուրջի մի մասը։—Տեղական բնակիչները աւանդութեամբ պատմում են որ սա Պահլավունեաց ժամանակ վանքերի հետ կառուցած է եղել մի երայարկ կամուրջ, որոնց ցածինը չոմարան, միջինը անասունների բնակարան, իսկ բարձրինը ճանապարհորդների իջևան է եղել։ Այսպիսի մի պատմութիւն ես հերքելու նպատակ չունեմ, թէև բացի մի յարկից այլ չինութիւնների հետքեր անհայտանալի էին։ Շատ որոնեցի արձանագիր գտնել, որով կարողանայի որ դարի, կամ ինչ իշխանի ձեռագործ լինելը իմանալ, սակայն ջանքս ի դերև անցաւ։

Տները չինված են հազիւ թէ գետնից կէս սաժէն բարձրութեամբ. որմերը մանր քարերով են շարված, թէև պատահում են ձեղ նրանց մէջ, դռների երկու կողմերը, խաչարձաններ։ Տանիքները ծածկված են ըստ մեծի մասին գետի ափից ժողոված ուռենիների ճիւղերով։ Տեղական բնակիչները, որոնք Ղարսի և այս կողմերի զանազան գիւղերից եկած գաղթականներ են, պարապում են միայն երկրագործութեամբ և մասամբ ձկնորսութեամբ, իսկ ուրիշ արհեստներ և կարդալ չը գիտեն։

Ներքին-Ղանլիճայի հիւսիսային կողմը, կանաչ հովտի վրա կանգնած են երեք վանքեր, որոնցից երկուսը գրեթէ միմեանց կից են, իսկ երրորդը միջի մեծ վանքից 3 սաժէն հեռաւորութիւն ունի։ Սրանք Մարմաշէն կամ Մարիամաշէն են կոչվում, ափխազների Մարիամի և հայոց Թագուհու, Գագիկ արքայի Թոռան անունով։ «Մեծ վանքը, անուն սրբոյն Ստեփաննոսի կառուցեալ է, ի ՆՀԸ Թւականին հայոց. Սմբատ Թագաւորութեան ժամանակ. Վահրամ և Վասակ Պահլաւունւոց, օգնականութեամբ Շուշիկայ տիկնոջ և Գրիգորի Մագիստրոսի, յիշատակ հոգւոցն իւրոց և Ապլխարիպայ հայոց Մարզպանին, մանկանն Համզէ» և այլն, որ կը հաստատէ հարաւային որմի վրա գտնվող բարեպաշտ հիմնադրաց անունները։ Թէ ներքուստ և թէ արտաքուստ սրբատաշ կարմիր քարերով գեղեցիկ քանդակագործութեամբ զարդարված են. որմերի հաստութիւնը հազիւ թէ ⅓ արշին լինի, բարակ սիւների վրա մի գմբեթով։

Սրա առաջ երբեմն զանգակատուն է եղել, որ այժմ իսպառ աւերակ է դարձած։

Սուրբ Ստեփաննոս վանքի հանդէպ, 1873 թվին պ. Երիցեանց փորել տալով կիսակլոր քանդված շատրուան էր գտել։

Մեծ վանքի արևելեան կողմը, ի չարս այլ բազում չիրմաց, մի քար կայ հետևեալ յիշատակարանով. «Այս հանգիստ է Սոփիայ աղախնոյն Քրիստոսի կնոջն Վահրամայ Պահլավունոյ իշխանաց իշխանի դստերն Տիգրանայ հայոց Մարզպանի տեառն Անձևացեաց մեծի Վասպուրականի և այլն, Ի թին հայոց ՆԿԴ-ին» Բայց ինչպէս պատմեցին ինձ ականատես ծերունիք, այդ տապանաքարը բերված է գիւղից քիչ հեռու, փոքրիկ բլրակի վրա գտնվող կիսաւեր մատուռի մօտից սրանից 40—45 տարի առաջ. այս գերեզմանը բանալով տեսել են, որ նրա տակ հանգչում է ալեզարդ մօրուսով վարդապետի բոլորովին նոր դիակը. թէ որքան ուղիղ են այս խօսքերը, վկայել չեմ կարող, բայց տապանաքարի տեղափոխելը շատ հաւանական է։

Երրորդ վանքի, որ մեծից դէպի հիւսիս է գտնվում, արևելեան որմը իսպառ կործանված է. գմբեթը կանգուն է, որի զմայլեցուցիչ նկարները կանաչ մամուռով ծածկված են։

Պատմում են, որ Պահլավունիք այս վանքերը չինած ժամանակ՝ եօթը տարի կարմիր մահուդի և երեք տարի կտաւի չապիկով պահած են...

Մարմաջէն վանքերի հանդէպ, սրբատաշ քարերով կառուցված է գիւղի ուսումնարանը զոյգ դասատուններից բաղկացած որ հաղիւ թէ մի երկու տարի իր պաշտօնը կատարելուց յետոյ, երկար ժամանակ է, որ միայն ուխտաւորների իշնան և հոգեորականների բնակարան է դարձած։ Ես հարցրի թէ ինչի ուսումնարանը այդպիսի թշուառ դրութեան մէջ են թողած, քահանան պատասխանեց, որ փող չը լինելու առիթով, ուսուցիչ վարձել անկարելի է. վանքը աղքատ է, իսկ ժողովուրդը իր որդկերանց տարվան երեք եղանակներում ևս ուսումնարան գնալը արգելելուց զատ, գոնէ ձմեռվան համար մի անչչան դումար զոհել չէ խոստանում։ Այս յարգելի պատճառի դէմ ոչինչ չունէի խօսելու։

Կար. Ցոհ.

ՆԱՄԱԿ ՋԱԼԱԼ-ՕՂԼՈՒՑ

30 յուլիսի

Յուլիսի սկզբներում Ղազախի պրիստաւը և Դիլիջանի անտառապետը գալիս են Լօռու գաւառի ծայրը, որ սահմանակից է Ղազախի գաւառին, և Լօռու գաւառի ծայրն ընկած Աթան, Շամուտ և Անիզօրավար գիւղերի տանուտէրերին մի քանի գիւղականներով կանչում են իրանց մօտ և սաստկութեամբ յայտնում են, որ կամ քաշեն այդ գիւղերից և կամ ճանաչեն Ղազախի իշխանութիւնը, հնազանդվեն և կատարեն Դիլիջանի անտառապետի հրամանները։ Ժողովրդականները զարմանալով այս դէպքի վրա, պատասխանում են, որ նրանք այդ գիւղերը հիմնել են 14 տարի առաջ Թիֆլիսի իշխանութեան հրամանով և Թիֆլիսի հայոց կոնսիստորի թոյլտուութեամբ, որին պատկանում է գեղինը։ Ցայտնում են նրանց, որ արքունի հարկը տալիս են Թիֆլիսի գանձարանին, իսկ գեղնի հարկը եկեղեցու կապալառուին, այս պատճառով այսպիսի կողմնակի հրամաններ չեն կարող կատարել։ Պ. պրիստաւը և անտառապետը պնդում են, որ այդ տեղերը ինչպէս Թիֆլիսի գաւառապետի նոյնպէս և եկեղեցու իրաւունքից դուրս են եկած և պէտք է իրանց հպատակեն այնուհետև, և թէ նրանք այդ գիւղերը չեն ընդունում իբրև օրինաւոր գիւղեր, այլ փախստական և իշխանութենից անյայտ բնակութիւններ։

Ժողովրդականները պատասխանում են, որ իրանց գիւղերը կամերալով հաստատ գիւղեր են Լօռու գաւառի վրա և բացի արքունի հարկը, որ տալիս են Թիֆլիսի գանձարանին և այժմ ևս գործող բանակի մէջ ունեն սայլեր և 3 միլիցիոներներ Լօռու պրիստաւի հրամանով. ուրեմն իրանք չեն կարող լինել անյայտ, իսկ ինչ որ վերաբերում է եկեղեցու ձեռքից դուրս գալու համար, ասում են որ սրանից երկու տարի առաջ թէև սահմաններ որոշող կոմիսիային (межевая коммисія) արքունի հաւատարմատարները վէճ յայտնեցին այս գեղնի համար, բայց իրանց պատուիրած է հպատակել եկեղեցուն մինչև գործի վախճանական վճիռը դատաստանական կարգով, և քանի որ գործը դատաստանով չէ վերջացած, նրանք չեն կարող եկեղեցուն հակառակել։ Իսկ եթէ սրտով անգամ կամենային Ղազախի գաւառին պատկանել դարձեալ նրանց համար անհնարին է, որովհետև նրանց գիւղերից մինչև Ղազախի առաջին գիւղը 70 վերստից առաւել է, այն ևս անմարդաբնակ և լեռնային ճանապարհները դժուար անանցնելի և աւազականոցներ են ու ձմեռները կապված են ձիւնով։ Իսկ եթէ այդ տեսակ կարգադրութիւն լինի պէտք է Լօռու պրիստաւը յայտնէ նրանց և յանձնէ Ղազախի գաւառապետին։ Այն ժամանակ նրանք օգտաւէտ կը համարեն թողնել այդ գիւղերը և ուրիշ տեղ որոնել, քան թէ յանձն առնել անտանելի դժուարութիւնների, միանալով Ղազախի գաւառի հետ և ամառները իշխանութեան մօտ գնալիս լեռներում կողոպտվել և ձմեռները լեռները կապված լինելու պատճառով Լօռի գնալ, այնտեղից Ալէքսանդրօպոլու գաւառը և Թագաւորական ճանապարհով 6—7 օրվայ մէջ հաղիւ հասնել Դաղքասաման, ուր նստում են գաւառապետը և հաշտարար դատաւորը. մինչդեռ Լօռու պրիստաւը, որ նստում է Ջալալօղլի, հեռու է վեց ժամվայ ճանապարհով։

Այդ երեք գիւղերի բնակիչները այս տարի Դիլիջանի Ատամբէկլուի աւազակաբարոյ թուրքերի ձեռքով մի քանի անգամ կողոպտված են եղել։ Թուրքերը տանապատիկ առաւել են հայերից և աներկիւղ են, չեն թողնում հայերին հնձել իրանց խոտերը, հերկել գետինը և սպառնում են խլել նրանց արտերը։

Վերոյիշեալ անտառապետը խոստացել է թուրքերին տալ այն գիւղերը նրանց բնակութեան համար. իսկ սրանց ցանկութիւնն էլ այդ է, որ այդ հեռաւոր և առանձին տեղում գործ ածեն ապահովապէս իրանց արհեստը, այն է՝ աւազակութիւն։

Երեք գիւղերի հայերը ուղարկած են Թիֆլիսի նահանգապետին մէկ խնդիր հանգամանօրէն, բայց դեռ կարգադրութիւն չը կայ։ Խնդրած են Լօռու պրիստաւից պաշտպանութիւն, բայց նա ևս չէ կարողանում օգնել։

Ատամբէկլուի թուրքերը ամեն ամառ սաստիկ աւազակութեամբ քանդում են Լօռու մի քանի գիւղերը, այդ է նրանց մեծ արհեստը։

«Մշակ» լրագրի 104 և 105 համարները Ջալալօղլու մէջ մի քանի օր տանից տուն ման ածելով կարդում էին մեծ հետաքրքրութեամբ։ Այն յօդուածը բաւական ներգործութիւն ունեցաւ Ջալալօղլու հասարակութեան վրա. շատերը անիծում էին գրողին և շատերը օրհնում։ Մի քանի երիտասարդներ չը կամենալով տանել այս նախատինքը բացած են իրանց մէջ ստորագրութիւն ժողովելու մի դումար և նրա տոկոսով պահելու երկսեռ դպրոցներ։ Այդ ստորագրողների ցուցակը հասել է մինչև 30 անձերի, որոնք միանուագ պէտք է տան 200-ական ռուբլ և այդ դումարը պէտք է տան տոկոսով ապահով անձանց և տոկոսով պէտք է գործադրեն դպրոցների վրա 10 տարի ժամանակով, իսկ այդ ժամանակը լրանալուց յետոյ ամեն մէկը պէտք է ստանայ իր դումարը։ Ջալալօղլու վաճառական հին աղաները, որոնք սովոր են տանելու հասարակութեան փողերը և արգելք լինելու զանազան ազգային բարեգործութիւնների, աշխատում են այս անգամ ևս արգելք դառնալ։ Եթէ մեր թեմական պ. տեսուչը այս միջոցներին այստեղ գտնուէր, անշուշտ կը յաջողեցնէր դպրոց բանալը։

Ջալալօղլու վաճառականների դասը, որ մինչև այսօր կիրակի ասած բանը չը գիտէր, այս տարի երիտասարդների խումբը այնպէս կարգադրեց, որ կիրակի օրերը կրպակները փակեն, սուրբ պատարագին ներկայ գտնվեն, և յետոյ ազգային գործերի վրա մտածեն. այս կարգը չարունակեցին մի քանի կիրակի, սակայն մի քանի ագահ անձինք խախտեցին այս գեղեցիկ գործը։

Ալէքսանդրօպոլցի մի կոչկակար երիտասարդ, որ շատ ժամանակից բնակվում է Ջալալօղլի, գաղտնի կերպով ընդունած է մի տեսակ հերձուածողութիւն. այս օրերս մի եկեղեցական տօն օրին, տանուտէրը պատուիրում է խանութը փակել, բայց նա չէ ուզում հնազանդվել և պահանջում է ցոյց տալ այդ օրէնքը սուրբ աւետարանի մէջ, իսկ տանուտէրը գաւազանի հարուածներով և մի քանի օրվայ բանտարկութեամբ նորա աղանդին օրէնք է ցոյց տալի։

Ջալալօղլու վաճառականները, որ պարապում են մսացու տաւարի առևտուրով այս տարի մեծ քանակութեամբ տաւար բերած էին Ռուսաստանի կողմերից, բայց այդ բերած տաւարների կէս մասը հիւանդութենից կոտորվեցան։ Վնասը հասնում է մինչև 40—50 հազարի։

Այս տարի Լօռու առատ անձրևները հացերին մեծ վնաս տուին, վերջը կարկուտը շատ տեղ ոչնչացրեց։ Ամեն բան կարգից դուրս թանգ է. թանգութեան պատճառներից մէկն է գեառեռի և Ջալալօղլու զօրքերի բանակները։ Խոտը այնքան առատ է, որ ծերերը պատմում են թէ չեն տեսած այդպիսի առատութիւն։

Մ.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻՑ

3 օգոստոսի

Ագուլեցի մայրերը իրանց երեխաներին մինչև այն հասակը հասցնելը, որ նոքա պէտք է մտնեն ուսումնարան, շատ անկանոն են կրթում։

Մայրը մինչև երեխայի երեք տարեկան դառնալը նրա լացը կտրելու համար, փոխանակ ուրիշ միջոցների դիմելու վախեցնում է երեխային ասելով, որ ահա արջ է գալիս, կամ անկիւնում գայլ կայ, կամ կը տանեմ քեզ գետը կը զցեմ և այլն։ Մայրերի այսպիսի վարմունքը դէպի իրանց երեխաները նրանց համար շատ վատ հետևանքներ է ունենում։ Ծեծը մեր ընտանիքների մէջ ամենատարածված դաստիարակող միջոցներից մէկն է։ Ագուլեցի հայրերը և մայրերը չեն կարող հասկանալ, որ ծեծելով իրանց երեխաներին, նոքա ոչ թէ կրթում են նրանց, այլ դարձնում են անզգայ, յամառ և վերջապէս բթացնում են այդ ընդունակ երեխաներին։ Երեխաների լացը կտրելու համար ագուլեցի մայրերը նրանց մրգեր են տալիս։ Պատահում է շատ անգամ, որ միրգը խակ է լինում և երեխաներին հիւանդացնում է։ Իւրաքանչիւր ամառ, երբ մրգերը այստեղ սկըսում են հասնել, գիւղի երեխաների մեծ մասը հիւանդանում է։ Այդ հիւանդութիւնների պատճառներից մէկն էլ մրգեղէնի մեծ քանակութեամբ գործածելն է։

Մեր հարուստներից ամեն մէկը իրան ազնուական է համարում, եթէ նա մինչև անգամ նախրչի կալօի սերունդին էլ պատկանէր։ Հարուստ ծնողները, այդ ինքնակոչ ազնուականները, թոյլ չեն տալիս իրանց երեխաներին որ և է յարաբերութիւն ունենալ աղքատների երեխաների հետ։ «Քեզ համար լաւ չէ, որ դու խաղաս Ուսկանի տղուն հիդ, նօ ուվ ա, նօկ մուժիկը, ասում են մեր հայրերը և մայրերը իրանց որդկերանց և այսպիսով անգիտակցաբար սերմանում են երեխաների մէջ հպարտութիւն։ Այս է պատճառը, որ այստեղի հարուստների որդիքը մեծ մասամբ հպարտ և իրանց ծնողների կատարեալ պատկերներ են ներկայացնում։ Այդ պարոնները զարդարում են իրանց մատները մատանիներով, կուրծքը ժամացոյցի շղթայով և զանազան մեդալիոններով և ուռած հնդկահաւերի պէս շրջում են Ագուլիսի բազարում։ Նոքա այդ հասակում մի տեսակ արհամարհանքով վարվում են աղքատ երիտասարդների հետ։ Այս բոլորի մէջ մեղաւորը հին սերունդն է, որ չէ իմանում դաստիարակել իր զաւակներին։ Ի հարկէ պատահում են և բացառութիւններ, դրանց մասին մենք չենք խօսում,

Գողթնեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 8 օգոստ. 78

Այսօր որ կը վերադառնամ Կ. Պոլիս, ինձ համար քաղցր պարտաւորութիւն կը համարիմ շնորհակալութիւնս յայտնել այն ամեն անձերի որք համակրութիւնով ընդունեցին ձեր և մեր արած հրաւէր «Մշակի» մէջ Արարատեան ընկ. համար։ Շնորհակալ ենք մասնաւորապէս հայ ուսանողներէն, որք Արարատեան ընկերութիւնի առիթով ցոյց տուին թէ որչափ եռանդ ունին և կը ցանկան մի օր Հայաստանի ժողովուրդն լուսաւորված տեսնել։ Մենք Տփղիսէն բաժանված ժամանակ, այն համոզում կը տանիմք մեզ հետ, որ թէ այստեղ ազգային եռանդ և կեանք կայ, այդ գլխաւորապէս ուսանողների մէջն է։ Կողջունեմք ապագայի այդ յոյսեր և կերթանք ծանօթացնել նրանց անուններ Հայաստանի մանուկներին։

Արարատեան ընկերութիւնն որ արդէն իւր Բ. տարեկան տեղեկագրի մէջ «ի մասնաւորի» յայտնած է իր շնորհակալութիւնը ձեզ պ. խմբագրապետ, այսօր ևս կը խնդրէ թոյլ տալ «Մշակի» էջերին մէջ յայտնել իր շնորհակալութիւնը ձեզ որ ոչ միայն հրաւէր կարգացիք օգնել Արարատեան ընկերութիւնի վանի մէջ բանալիք գիշերօթիկ վարժարանին, այլ և չը նայելով ձեռքդ բազմազբաղ գործերին, յանձնառու եղաք, ինչպէս մինչև այժմ նոյնպէս և այսուհետև, հաւաքել Արարատեան ընկերութիւնի համար նուէրներ և հասցուցնել իր տեղ, դիւրութիւն տալ այն Ռուսիաբնակ հայերի որք կուզեն օգնել թիւրքական Հայաստանի մէջ գտնուող իւրեանց եղբայրակիցների։ Ով որ կը կամենայ Արարատեան ընկերութիւնի կանոնագրութիւնն և հրատարակած տեղեկագիրներն ունենալ, կարող է դիմել «Մշակի» խմբագրատունն և նրա միջոցով հասցուցնել իր նուէր կամ որ և է առաջարկութիւն Կ. Պոլսի Արարատեան ընկերութիւնին։

Հաճեցէք հրատարակել, պ. խմբագրապետ, այս երկտող գրութիւնս «Մշակի» հայրենասէր էջերի մէջ։

Մ. Փորթուգալեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են, որ յուլիսի 16-ին, հայ երիտասարդները յօգուտ պ. Ալաբեանի ներկայացրին «Արշակ» և «Սէր դէպի բըժիշկը», հեղ. Մոլիէրի։ Ներկայացումն բաւական աջող անցաւ։ Եկամուտը մեծ չէր։ Այստեղի հասարակութիւնը շատ սառն է վերաբերվում դէպի հայ թատրոնը։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ պէտք կայ մի երիտասարդներից կազմած խումբի, որ թատրոնական պիեսներ թարգմանէր, եղածները հաւաքէր և ներկայացումներ տար։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ այնտեղի հասարակութիւնը հոգում է ուսուցիչներ պատրաստել։ Մէկ վարժապետացու բագուցիները արդէն ընտրեցին և ուղարկեցին։ Դա բէալական ուսումնարանի վեցերորդ դասատանից դուրս եկած մի երիտասարդ է։ Նամակագիրը գտնում է, որ այդ ընտրութիւնը աջող չէ, որովհետև երիտասարդի առողջութիւնը խանգարված է։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ Հալաբար մասում գտնված Պոկրովսկի զօրանոցի արտաքնոցի խողովակը քարափի ծայրից թողած է ներքև։ Այդտեղից անմաքրութիւնը բաց օդի միջոցով ցած է թափվում և գարշահոտութիւն է տարածում։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ խորէն վարդապետ Ստեփանէի գնալուց յետոյ կուսակցութիւնները Բագուի մէջ հաշտվում են։ Նամակագիրը ուրախ է, որ գործը այսպիսի լաւ ընթացք ստացաւ և յոյս է յայտնում, որ բոլոր կուսակցութիւնները միացած ճշմարիտ օգուտ կը բերեն հասարակութեան գործերին։

—

ԹԻՖԼԻՍԻ Մարիամեան-Յովհաննեան օրիորդաց ուսումնարանում ուսումը սկսվում է սեպտեմբերի 2-ին, իսկ աշակերտուհիների ընդունելը օգոստոսի 20-ին։ Անցեալ տարվանից բացված են երեք պատրաստական և մէկ առաջին դասատուն։ Այս տարի բացվում է երկրորդ դասատուն։ Պրոգրամմայի և աշակերտուհիների ընդունելու մանրամասն պայմանների մասին կարելի է տեղեկութիւն ստանալ ուսումնարանի տեսչից։ Խորհուրդ ենք տալիս հայ ծնողներին իրանց աղջկերանց տալ այդ ուսումնարանը։ Ինչպէս նկատեցինք անցեալ ուսումնական տարվայ քննութիւնների ժամանակ ուսումնարանը խելացի կերպով է կառավարվում։

—

Առաջարկում ենք ԹԻՖԼԻՍԻ թեմի ուսումնարանների և թեմական տեսչի գործունէութեան հետ ծանօթ անձանց դրանց վերաբերեալ տեղեկութիւններ տալ մեզ։ Նամակագիրների ազգանունները գաղտնի կը պահվեն։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ հաղորդում են, որ նրա գաւառի մէջ եղած Բօգիսնովկա գիւղի մօտ անցեալ յուլիսի 5-ին, գտել են երկու մորթված դիակներ։ Մինչև այժմ չեն գտնված ոչ չարագործները և ոչ սպանվածների ազգականները, չը նայելով որ քննիչը իրանից կախված կարգադրութիւնները արել է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԹՈՒՄ, ԼԱԶԵՐ ԵՒ ՀԱՑՈՑ ՀԱՐՑ

«Polit. Corresp.» լրագրին, յուլիսի 16-ին Տրապիզոնից գրում են հետևեալը։ «Զը նայելով ձևական խաղաղութեան հաստատվելուն, այստեղ թէ քաղաքական և թէ զի-

նուորական մթնոլորտը այնպէս ելէկտրացած է, ինչպէս և Ռուսաստանի հետ եղած պատերազմի բոպէներում։ Մի կողմից քուրդերի և լազերի մէջ տիրապետում է ամենամեծ յուզմունք և շարժում, իսկ միւս կողմից ինքն Թիւրքաց տէրութիւնը չէ դադարեցնում զինաւորվելը և շարունակում է այդ գործը այնպիսի եռանդով կարծես թէ վաղը նոր պատերազմ է սկսվելու։

«Բաթումի բերդապետ Դէրվիշ-փաշան դեռևս այս ամսվայ 8-ին պաշտօնական ազդարարութիւն ստացաւ Բաթումը դատարկելու համար։ Այս բանը իսկոյն և եթ պաշտօնապէս իմաց տրվեցաւ ռուսներին։ Բայց հազիւ թէ այս հրամանը կարողացաւ հասնել Դէրվիշ-փաշային, որ յանկարծ Բաթումում յայտնվեցաւ նախկին Փիլիպպօպօլի բերդապետ Իբրայիմ-փաշան, ունենալով Բ. Դռնից գաղտնի յանձնարարութիւն Դէրվիշ-փաշայի մօտ։ Բայց այս յանձնարարութիւնը աւելի լաւ քննելու համար, Իբրայիմ-փաշան նշանակված էր մի և նոյն ժամանակ Երզնկայում զետեղված զօրքերի հրամանատար, Նորերումն տիֆով վախճանված Մուստաֆա-փաշայի տեղ։ Իբրայիմ-փաշան անցնելով այդ կողմը մնաց մի օր միայն Տրապիզօնում և յետոյ շոգենաւի վրա շարունակեց իր ճանապարհը դէպի Բաթում։ Ինչքան և կարճատև էր Բ. Դրան այս լրտեսի մնալն այստեղ, այնու ամենայնիւ նրա հետևանքները երկար չը սպասել տուին իրանց։ Իբրայիմ-փաշան մի քանի ժամ միայն խօսակցեց Բաթումի ամենամօտ շրջականներից եկած լազերի մի քանի առաջնորդների հետ։ Այս բանակցութիւնների պտուղները իսկոյն երևան ելան Իբրայիմ-փաշայի ճանապարհ ընկնելուց յետոյ։ Նոր բողոք յայտնվեցաւ Ռուսաստանի հետ միանալու դէմ և ներկայացվեցաւ տեղական անգլիական ընդհանուր հիւպատոսին, Բ. Դրան և Դէրվիշ-փաշային։ Այս բողոքի մէջ լազերը յայտնում են, որ իրանք երբէք չեն կարող հաշտվել ռուսաց իշխանութեան հետ, որ իրանց կրօնական և այլ շահերը պահպանելու համար սրբազան պարտաւորութիւն է դրած իրանց վրա ամեն միջոցներով արգելք դնել նրանց երկրի ռուսներին յանձնելու դէմ, և նրանք վճռել են, որ եթէ սուլթանի կառավարութեան կողմից օգնութիւն չեն ստանայ, կը պաշտպանեն սեփական արիւնով և սեփական ոսկորներով իրանց հաւատը և ազատութիւնը։ Դէրվիշ-փաշան, իր կողմից, հարկաւոր համարեց տեղեկութիւն տալ այս բանի մասին Բ. Դրան, և մի և նոյն ժամանակ յայտնեց որ լազերի, իրանց բողոքի մէջ յայտնած սպառնալիքները ինքն շատ ծանր բան է համարում, այնպէս որ դժուար թէ նա կարող է Բաթումի դատարկելու համար լինելու պատրաստութիւնների պատասխանատուութիւնը իր վրա վերցնել, որովհետև ուրիշ կերպ անկարելի է ծանր յուզմունքների և արիւնհեղութեան առաջն առնել։ Մի խօսքով այս պառաւ և խորամանկ աղուէսը—այսպէս է Դէրվիշ-փաշայի վարկը Բօսնիայում և Հերցեգովինայում ունեցած յանձնարարութեան ժամանակից,—միանգամից հիանալի կերպով մոռաւ Իբրայիմ-փաշայի գաղտնի յանձնարարութեամբ ցոյց տուած դերի մէջ։ Բայց և Դէրվիշ-փաշան փաստերը չափազանց չէ մեծացնում, առաջ բերելով լազերի ֆանատիկոսութիւնը, որ յուզմունքի ծայրայեղ սահմաններին է հասել։ Ոչ միայն պաշտօնական, բայց և վերջին ժամանակներումս այստեղ ստացված մասնաւոր տեղեկութիւնները հաստատում են այս։ Այստեղ ոչ աւելի և ոչ պակաս 34,000 լազեր կան—և այս իսկապէս այդպէս է,—որոնք կատարելապէս պատրաստ են պատերազմելու։ Նոքա հիանալի կերպով զինուորված են անգլիական նոր հրացաններով։ Այդպիսի հանգամանքներում շատ պարզամտութիւն կը լինէր մտածել, որ ռուսներին կաջողվի առանց լազերի ընդդիմադրութեան տիրել Բաթումին։

«Պակաս վտանգաւոր չէ գործերի դրութիւնը Հայաստանում, այսինքն Երզնկայի Դիարբէքիրի և Վանի նահանգներում։ Երեք շաբաթ առաջ, Կ. Պոլսում վճռեցին Թիւրքաց յանձնաժողով ուղարկել Հայաստան քննութիւն անելու աւազակ քուրդերի անզէն հայերի դէմ կատարած բարբարոսութիւնների վերաբերութեամբ և քննութեան հետևանքների մասին վերջը արդար զեկուցումն ներկայացնելու Բ. Դրան։ Բայց սկզբից և եթ Բ. Դրան այս ընթացքի ապարդիւն լինելը յայտնվեցաւ, երբ յանձնաժողովի նախագահ նշանակվեցաւ քուրդ Ահմեդ-Շեվֆիկ-բէյ, որը հայերի մէջ աննախանձելի անուն ունի։ Յանձնաժողովի անդամների թուում գտնվում է և Թիւրքաց պարլամենտի նախկին պատգամաւոր Երզնկայից, հայազգի Մելիտոս-էֆէնդին։ Սա մի սարսափելի մարդ է. սա անպատճառ կը ստորագրի Ահմեդ-Շեվֆիկ-բէյի իւրաքանչիւր ստորագրված թղթին։ Այս մարդը միշտ կոյր զէնք էր փաշաների ձեռքին, որոնք գործ էին ածում նրան իբրև պատսպար իրանց կեղտոտ նպատակներին հասնելու համար։ Եւ իսկապէս, հռչակաւոր յանձնաժողովը ամենաչար գործերի սկիզբ դրեց։ Կառավարութիւնը 12,000 քուրդեր զինաւորեց։ Բ. Դրան իսկական նպատակն է Քուրդիստանի մուսուլմանի նման ժողովրդական զօրք կազմակերպել։ Այն ժամանակ երբ Մելիտոս-էֆէնդին յանձնված է շրջագայել վերոյշեալ երեք նահանգները և հայերի պէտքերի և գանգատների մասին տեղեկութիւններ հաւաքել, ինքն Ահմեդ-Շեվֆիկը ճիշդ զինուորական գործունէութիւն է ցոյց տալի Վանում։ Նա ժողովում է զէնք կրելու ընդունակ մարդիկ, ժողովածներին կարգադրում է թաբօրների վրա, զէնքեր է տալիս նրանց և առաջնորդներ է նշանակում այս նոր «Քուրդիստանի միլիցիայի» վրա, ինչպէս յայտնի է նա պաշտօնական պայմանական լեզուով։ Բնական է որ այդ ժամանակից քուրդերի կատաղութիւնը սկսեց միայն մեծանալ։ Հայերը ապրում են անդադարելի սարսափի և յուսահատութեան մէջ, և առևտուրը, որ մինչև այժմ գլխաւորապէս նրանց ձեռքին էր, այժմ բոլորովին դադարել է։

«Այն ժամանակ երբ բոլոր այս գործունէութիւնը զարգանում է այսպէս ասած բեմի ետևից, Թիւրքաց յայտնի պաշտօնական գործունէութիւնը աւելի հանգստացուցիչ չէ։ Բոլոր Անատոլիայի մէջ զէնքի են կանչված 3-որդ դասի զօրագունդերը։ Զօրքը, որի գլխաւոր բանակը ներկայ ժամանակում գտնվում է Երզնկայում, իւրաքանչիւր օր լրացնվում է մինչև անգամ հեռու Մեսոպոտամիայից եկած զինուորներով։ Կ. Պոլսից գալիս են անդադար շոգենաւեր զէնքերով և հագուստներով։ Այս ապրանքները մեծ մասամբ գիշերներով են դուրս կրում ափի վրա, և այդտեղից սայլերով և բեռնակիր կենդանիներով տարածում են երկրի ներսը գտնվող ամրութիւնների մէջ։

«Գլխաւոր շտաբի օֆիցէրները քննում են զօրքերի կանգնելու տեղերը։ Այս օրերս սպասում են Բլումֆաշայի գալուն, որին յանձնված է բարձրացնել մի շարք ամրութիւնների։ Ամբողջ Հայաստանի մէջ, այստեղ այնտեղ, կարծես գետնի տակից բուսնում են անգլիական ինժինէրներ, որոնք մեծ եռանդով մասնակցում են փաշաների աշխատանքներին։ Մի խօսքով այստեղ ամեն բան այնպիսի պատերազմական նշան ունի, որ մարդս ակամայ մտածում է նոր պատերազմ սկսվելու քան թէ խաղաղութեան վրա։»

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզում, ինչպէս հաղորդում է «Temps» լրագիրը, օգոստոսի 3-ին տեղի է ունեցել կանանց կօնգրէս։ Այդ ժողովը օգոստոսի 3-ին իր ունեցած նստի մէջ պարապում էր կանանց խնդրի տնտեսական մասով։ Մինչև տաս հոգի երկու սեռի ատենաբանները հերթով խօսեցին։

Յայտնվեցան այնպիսի մտքեր, որ կնոջ աշխատանքը պէտք է մարդու աշխատանքին հաւասարապէս վարձատրվի։ Ատենաբաններից ոմանք այն միտքը յայտնեցին, որ եթէ մարդկային հասարակութեան մէջ ընդունված օրէնքները թերի և անարդար են, այդ այն պատճառով է, որ տղամարդիկ են հեղինակում այդ օրէնքները, իսկ եթէ կանայք գրէին օրէնքները, նրանք աւելի արդար կը լինէին։

Կօնգրէսի մէջ խօսվեցաւ կանանց ընկած դասի վրա, անառակութեան վրա։

Թէև ժողովի մէջ շատ աւելորդաբանութիւններ եղան, բայց վերջը կօնգրէսը ձևակերպեց շատ օրինաւոր պահանջները, օրինակ՝ որ կինը տղամարդու աշխատանքին հաւասար աշխատանքի համար ստանար հաւասար վարձատրութիւն, որ մի քանի աշխատանքներ, որոնք աւելի յարմար են կնոջ բնաւորութեանը, կատարելապէս կանանց յանձնվեն և այլն։

Կօնգրէսը ընդունեց հետևեալ վճիռները։ 1) Անհրաժեշտ է հիմնել արուեստագործական թէ երկու սեռի և թէ մասնաւորապէս իգական դպրոցները։ 2) Կանայք պէտք է իրաւունք ստանան վարել հասարակական պաշտօններ։ 3) Պէտք է ընդունված լինի հեռևեալ հիմնական սկզբունքը՝ հաւասար աշխատանք պահանջում է հաւասար վարձատրութիւն։ 4) Օրէնքները, որոնք զրկում են կանանց քաղաքացիական իրաւունքներից, պէտք է վերքննվեն։ 5) Օրէնքները, որոնք սահմանափակում են ժողովների և ընկերակցութիւնների իրաւունքը, պէտք է վերցրած լինեն։

ՑՈՒՆԱՍՏԱՆ

Ցունաց հարցը, որ մի ժամանակ վճռված էին համարում, այժմ ինչպէս երևում է նորից սկսել է խըճճվել։ Բ. Դուռը պատրաստեց մի շրջաբերական, որով կէտ առ կէտ հերքվում է յունաց մինիստր Դէլիանիսի կօնգրէսում կարդացած գրութիւնը և հաստատվում է, թէ Բ. Դուռը պարտաւոր չէ Ցունաստանին զիջումներ անել։ Այնու ամենայնիւ շրջաբերականի մէջ յայտնված էին մի քանի զիջումներ, որոնց մտադիր էր սուլթանը մեծահոգութեամբ անել յօգուտ Ցունաստանի։ Դրանց մասին պէտք է առանձին բանակցութիւններ լինէին Բ. Դրան և Ցունաստանի կառավարութիւնների մէջ։ Շրջաբերականի արտաստահման ուղարկելը վերջին բոպէում յետաձգվեցաւ անորոշ ժամանակով։ Ինչպէս երևում է Բ. Դուռը չէ կամենում որ և է բանակցութիւն ունենալ Ցունաստանի հետ նախքան Բերլինի դաշնագիրը վերջնականապէս հաստատվի։ Աթէնքից եկած լուրերին նայելով, Սամոս կղզու կառավարութիւնը մտադիր է նշանաւոր վերանորոգութիւններ մացնել երկրի մէջ։ Օրէնսդիր ժողովը վճռեց փոխել երդման ձևը։ Ժողովի անդամները այլ ևս չեն երդվի հաւատարիմ լինել սուլթանին, այլ կուխտեն պաշտպանել հայրենիքի շահերը։ Ժողովը մի և նոյն նստին վճռեց ուղարկել Կ. Պոլիս մի պատգամաւորութիւն, որ պէտք է խնդրէ սուլթանից վերականգնել հին արտօնութիւնները։ Ժողովը չի փակվի մինչև Կ. Պոլսից պատասխան ստանայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, օգոստոսի 9-ին, տեղական բոլոր լրագիրները հրատարակվեցան առանց հեռագիրների որովհետև Միջազգային Ընկերութիւնը օգոստոսի 8-ին ոչ ոքին հեռագիր չը հասցրեց։

* * *

«Courrier des Etats Unis» լրագիրը հաղորդում է մի օտարոտի անցք։ Մի գիտնական պարոն Ժորժ Բօրլէյ անունով յայտնեց հասարակութեանը, որ յուլիսի 23-ին նա մի ազատամիտ դասախօսութիւն կը կարդայ և դասախօսութեան վերջը ներկայ եղող հասարակութեանը ցոյց կը տայ մարդու «յաւիտենական ոչնչութիւն» անցնելը, որովհետև ինքը անձնասպանութիւն կը գործի։ Մուտքի գինը իւրաքանչիւր մարդուց նշանակված էր մի ֆունտ ստերլինգ և եկամուտը որոշված էր գործ դնել Ժորժ Բօրլէյի թաղման վրա։ Դասախօսութեանը ներկայ էր մեծ բազմութիւն։ Բօրլէյ ոգևորված կարդաց մի գեղեցիկ գիտնական դասախօսութիւն։ Հասարակութեան ծափահարութիւնները նրան անդադար ընդմիջում էին։ Երբ դասախօսը վերջացրեց, նա իսկոյն իր ճակատի վրա ատրճանակ արձակեց և անչուչ ընկաւ իր բարեկամների գիրկը, որոնք սկզբից նրա յայտարարութիւնը հանաք էին կարծել և չէին կարողացել արգելել ինքնասպանութեանը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի։ Գաղը կը կատարվի Մեղենցօվի յուղարկաւորութեան հանդէսը, իսկ թաղումը չորեքշաբթի օր Սերգիեվսկի անապատում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի։ «Правит. Вѣстн.» լրագրում տպված է բարձրագոյն հրաման արձակել առաջին կարգի օպօլչենիայի զինուորներին, որոնք կանչված էին մշտական զօրքերի պակասորդները լրացնելու համար։ Ժանդարմների շէֆի օգնական գեներալ լէյտենանտ Սիլվերստովին հրամայած է ընդունել ժանդարմների շէֆի պաշտօնակատարութիւնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 97 ր. 50 կ., երկրորդ 96¾ ր., երրորդ 96¼ ր., չորրորդ 96 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 235 ր. 25 կ., երկրորդ 236 ր., արևելեան 95⅜ ր., ոսկի 7 ր. 91 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ 25,25 պէնս, ռուսաց 100 բուբլ Գերմանիայի վրա արժէ 214 մարկ, Փարիզի վրա 263 ֆրանկ 25 սանտիմ։ Տրամադրութիւնը խիստ հանգիստ է։

ՎԻԷՆՆԱ, 8/20 օգոստոսի։ Երէկ աւստրիացիները յամառ կռուից յետոյ վերցրին Սարաեվօ։

ՎԻԷՆՆԱ, 7/19 օգոստոսի։ Ռուսաց զօրքերի վերադարձը պէտք է սկսվի օգոստոսի 20-ին։ Ասում են, իբր թէ անգլիական դեսպան Լայարդ հաղորդեց ռուսաց դեսպան Լոբանով-Ռոստովսկուն, որ ռուսաց զօրքերի Կ. Պոլսից հեռանալուց յետոյ անգլիական նաւատորմն էլ կը հեռանայ Մարմարեան ծովից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի։ Այսօր դուրս բերին Մեղենցօվի մարմինը։ Հաւաքված բազմութիւնը մեծ էր։

ՆԻՒ-ԻՕՐԿ, 7/19 օգոստոսի։ Շատ հաւանական է, որ Չիլիի և Արգենտեան հանրապետութեան մէջ շուտով պատերազմ կը սկսվի։ Մի քանի բանկիրներ, դադարեցրին գումարների հատուցումն ոսկով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի։ Նշանակը անձրևային է։ «Петер. Вѣд.» լրագիրը օգոստոսի 8-ից հաղորդում է լուր, որ պօլիցիան Մեղենցօվի սպանողների հետքերը գտել է։ Կրանոէ Սելօի մէջ մի քանի մարդիկ կալանաւորված են։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինձ յանձնված լինելով ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԺԵՆՊԵՏՆԵՐ վարձել, խնդրում եմ ցանկացողներին պայմանների մասին խօսելու դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը. իսկ օտարաքաղաքցիք կարող են իրանց ցանկութիւնը յայտնել նամակով: Ընչարժմար հասարվածներին չի պատասխանվի:

Ց. Մէլիք-Ցակոբեանց

Օգոստոսի կէսից լոյս կը տեսնեն Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ հետևեալ նոր աշխատասիրութիւնները՝

1) Ընթերցարան հայերէն լեզուի «ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, երրորդ տարվայ ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ» անունով.

2) «ՀԱՄԱՌՕՏ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ.»

Ցանկացողները ստանալ յիշեալ գրքերը իր ժամանակին կարող են դիմել «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» կամ Զաք. Գրիգորեանի գրավաճառանոցը: 2—3

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ)

Վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

1. Նախակրթանք հայերէն գրաբար լեզուի, աշխատ. Գ. Արք. Այվազեան, չորրորդ տիպ, ծրխագոյն քան առաջինները: Գինն է 40 կոպէկ:

2. Սկզբունք Քրիստոնէական հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ. համառօտ դասագիրք արգասն պատմութեան և քրիստոնէական վարդապետութեան ծխական—տարրական ուսումնարանների համար, բազմաթիւ գեղեցիկ պատկերներով զարդարված, աշխատասիրութիւն Ստեփաննոս քահ. Տէր Ստեփանեանի: Գինն է 50 կ.

Վերոյիշեալ գրքերն ընդունված են իբրև դասագիրք Թիֆլիսի Թեմի պ. Թեմական վերատեսչից. վաճառվում են բացառապէս կենտրօնական գրավաճառանոցում: Գումարով և կանխիկ դրամով գնողներին նշանաւոր զիջումն է լինում:

3. Մամուլի տակից դուրս եկաւ և այս օրերս կը սկսուի վաճառուել պ. Ղազարոս Աղայեանի «Ուսումն մայրենի լեզուի» անունով դասագրքի երրորդ տպագրութիւնը, տպագրված ամենապատուական թղթի վրա: Գինն է 15 կ.

Նոր տպագրութիւնը վաճառվելու է միմիայն կենտրօնական գրավաճառանոցում: Պատուէրներն ընդունվում են:

Ի. Ա. ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐՕՎԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ՝

(Թիֆլիս, Սագօվայեա փողոց, տուն Գ. Ի. Շաքինօվի, № 34)

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է Բէալական ուսումնարան, գիմնազիական գիմնազիա և միւս ուսումնարաններ մտնելու համար:

Ուսումնարանի կուրսը համապատասխան է պետական բէալական ուսումնարանների կուրսին:

Ներկայ ուսումնական տարվայ սկզբին բացվում է 4-դ դասատուն:

Ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 21-ից, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ին

Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ամեն օր մասնաւոր բէալական ուսումնարանում

2—3

Առանձնապէս ՊԱՐԱՊՈՒՄ ԵՄ աշակերտներ պատրաստելով բոլոր ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Պատրաստում եմ ԵՐԲՈՐԴ կարգի կամաւոր մանողներին:

Նարեքէժնայա փողոց Վեցելի գործարանին կից, ՏՈՒՆ ԳՈՒՄԻԼԵՎՍԿՈՒ, № 1.

2—5

ՄԱՋԴՈԿԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ հարկաւոր են մի ՈՒՍՈՒՑԻՉ հայոց լեզուի և մի ՎԱՐԺՈՒՀԻ: Նոյն տեղի ՔԱՂԱՔԱՑԻՆ երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է մի ուսուցիչ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ տարեկան 600 րուբլ ռոճիկով, շաբաթական 17 դաս: Ցանկացողները կարող են մանրամասն պայմանները իմանալ «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՅՈՒՄ»

Գաբրիէլ քահանայ Տուրփայեան

2—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իր ներկայութեամբ ներկայ օգոստոսի 12-ին նշանակած է աճուրդ առանց կրկնաճուրդի 55 քառակուսի քաղաքային դատարկ հող ծախելու համար, որ գտնվում է Թիֆլիսի 2-դ բաժնի 15 մասնում:

1—2

«ՃՈՐՏՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» Գուստավ Քալանթարեանցինը, ռուսերէն լեզուով, ծախվում է Բերէնշտամի գրավաճառանոցում, Թիֆլիսում, Գօլովինսկի պրօսպեկտի վրա: Գինն է 75 կոպ. փոստի ծախսով 80 կոպէկ: 2—6

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ

ՀԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Կովկասի ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ յայտնում է հետևեալը: ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ մտնել ցանկացողները պէտք է խնդիրք ներկայացնեն բժշկական մասի կառավարչի անունով (Սալաերնայա փողոց, իշխան Անդրօնիկօվի տուն):

Մանկաբարձական արհեստի բարձր կուրսեր մտնելու համար, որ իրաւունք է տալիս ստանալ մանկաբարձի վկայական և մտնել պետական ծառայութիւն իբրև քաղաքական և գաւառական մանկաբարձներ, որ տալիս է բժշկական կանոնադրութեան յօդ. 541 մէջ յիշված արտօնութիւնները, պահանջվում է գիտենալ ռուսաց լեզուից ուղիղ կարդալ և գրել, պատմել գլուխ և բերանացի կարդացածը, թուաբանութեան չորս գործողութիւնները (գումարումն, հանումն, բազմապատկումն, և բաժանումն), անուանական թուեր և համեմատութեան կոտորակներից: Իսկ նրանցից, որոնք կը ցանկանան մտնել ստորին կուրսերը, որոնք աւարտելուց յետոյ կը ստանան գիւղական մանկաբարձների վկայականներ, պահանջվում է ռուսերէնից կարդալ և գրել և բերանացի պատմել կարդացածը:

Ինչպէս առաջինները նոյնպէս և վերջինները պէտք է 16 տարեկանից փոքր և 30 տարեկանից մեծ չը լինին:

Խնդիրքի հետ պէտք է լինեն մետրիկական և ծնողների կամ ամուսնի (եթէ մանողը ամուսնացած է) թոյլտուութեան վկայականները:

Թոշակագրամը հետևեալն է. երթևեկ աշակերտուհիներից տարեկան 40 րուբլ, իսկ գիշերօթիկներից, որոնց բոլոր հոգսերը ուսումնարանը կը տանի, 240 րուբլ և միանուագ 60 րուբլ սկզբնական ծախսերի համար:

Տարեկան թոշակագրամը մնում է սկզբից և չէ վերադարձվում, եթէ որ և է պատճառով աշակերտուհին ուսումնական տարվայ ընթացքում թողնէ ուսումնարանը:

Ուսման կուրսը երկու տարվայ է:

Մանրամասն տեղեկութիւնները կարելի է ստանալ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ:

2—6

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ нополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից:

ՕԳՈՍՏՈՍԻ 10 — ՏԵՂԵԿԱՑՈՅՑ — ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օգոստոսի 9-ին)	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	—
Հին 82 պր. մ. պրծ. 1000 մ.	1540	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1278	—
Վիգրինչի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրինչի »	235	—
Մարսելի կուրսը 267—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա	9	32
Վենայի կուրսը առէ 112 գլ.	100	—
Դուբեծի բարաթը	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	315	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	101	—
Շաքարը բրդելու	7	40
„ միւս տեսակը	7	25
„ չաքարաւազը	5	70
„ տրանզիտը	6	—
„ մաքուր փաթած	11	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	8	20
Միւս տեսակը հին սերմից	7	—
Բուրդը Թուշի	8	—
„ Թարաքամի	4	20
Ալիւր Շորագյալու	1	80
„ Երևանի	—	—
Գարին	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքս Նուխվայ	180	—
Կախեթունը	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	42	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեցոց	50	—
Կոֆէն մոկօի	25	—
„ լավանի	20	—
„ մարտինկօյինը	16	—

ՀԵՌԱԳԻՐ	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Եւրոպիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վերայի վրա № 38)

Մանկականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 րուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան: Բժշկապետ Ա. Ա—նով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպ.

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գորի	11. 58	9. 43
Միխայլօվօ	1. 29	11. 57
Րիօն	6. 47	
Փոթի	9. 40	
	առաւօտ.	
Փոթիից	9. 13	
Րիօն	12. 13	
Միխայլօվօ	5. 39	1 37
Գորի	7. 5	4 8
Թիֆլիս	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գորի	3. 20	2. 40	1. 33
Սուրամ	5. 22	3. 92	2, 18
Րիօն	9.	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան.

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բաքուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նախուս տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան	8
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը 8-ից մինչև 10 ժամը յունիսի 1-ց մինչև սեպտեմբերի 1-ը.

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեւիչ ներքին հիւանդութիւններ, Քուչաբեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւնների ձեռագիտական մասը 10-ից մինչև 11 ժամ:

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ վեներական և կաշու հ., Ա. Բախուտօվ կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Պէունօվ աչքի հ.:

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Բակստ կրծքային և ջղային հ.:

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների 10—11 ժամ, Կ. Բախուտօվ կանանց և ջղային հ.:

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Ա. Բախուտօվ կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան:

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային հ. Պէունօվ աչքի հիւանդութիւններ:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ. Մ. Ք. Մ. Ս. Ձեր նամակով դուք հաստատում էք մեր թղթակցի գրածը, սիրելի տէր-հայր: Դուք այնպիսի սխալներ էք անում, որ աններելի է 8 տարեկան երեխայի և նամակի մէջ այնպիսի բառեր էք գործ ածում, որ աններելի է կոպիտ աշխարհական գիւղացուն.

—ԼԷՆԿՕՐԱՆ. Ս. Ք. Տ. Ս. Ուղարկեցէք ընդհանուր հաշիւ, կը տպենք, իսկ բոլոր նուիրատուների ազգանունները չենք կարող տպել: Եթէ ձերը տպենք ուրիշներինն էլ չենք կարող բացասել, այն ժամանակ «Մշակ» ազգանուններով կը լցվի: Մենք տպում ենք միայն այն նուիրատուների ազգանունները որոնք խմբագրութեան միջոցով նուէրներ են անում.

Дозволено Цензурою 9 Августа 1878 г. Тифлисъ — Типографія Мартиросіанца — Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ